Արձանագրություն N 3
«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/6-ՏԿՆ-16/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «17» մարտի 2016թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Պետրոսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Սարգսյանը և Լ. Հարությունյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մովսեսյանը

Ի. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին
(Ս. Պետրոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	«Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ	-	info@.am@softlinegroup.com
2.	«ԼանԱր Սերվիս» ՍՊԸ	-	info@laner.ru

բ/ մասնակիցների կողմից առաջարկված գները պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով հետևյալն են.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ		
		Գինն առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ	Ընդհանուր
1	«Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ	550000	110000	660000
2	«ԼանԱր Սերվիս» ՍՊԸ	713750	142750	856500

գ/ «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկը ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են.

- «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի և ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը և գնահատվել են բավարար,

- չի համապատասխանում «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը քանի որ. հայտը սխալ է ներկայացվել www.armeps.am համակարգ (այսուհետև համակարգ) և համակարգը թույլ չի տալիս բացել և գնահատել հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին,

- երկրորդ տեղ զաբղեցնող ճանաչել «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ կարգ) 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ և ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

- գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը ժամը 17:00-ին, ՀՀք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ս. Պետրոսյան

Անդամներ՝ _____ Վ. Սարգսյան

_____ Լ. Հարությունյան

Քարտուղար՝ _____ Ա. Մովսեսյան